



ՌՈՒՐԵՆ ԵՊԻՍԿ. ԴՐԱՄԲՅԱՆ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՑԱԼՈՒՄ



Ռուբեն եպիսկ. Դրամբյան



նշպես հայտնի է պատմություններից, չորրորդ դարի մեր երկուականամյուր պետական գործիչները՝ Տրդատ թագավորը և Գրիգոր Լուսավորիչը միասնական ծրագրով հանդես եկան քրիստոնեությունը տարածելու և այն պետական կրոն դարձնելու գործում։ Միասնական այս գործունեությունը հետապնդում էր քաղաքական լուրջ նպատակներ։ Քրիստոնեությունը կրոնական բարոյախոսություն և ժողովրդի համար հոգեկան ու մտավոր դաստիարակության միջոց հանդիսանալուց առաջ, այն հիմնականում և գլխավորապես հանդիսանում էր ղենք՝ ուղղված պարսկական քաղաքականության դեմ։ Քրիստոնեությունը հանդիսացավ պարսկական ազդեցությունը վանելու, դուրս մղելու և Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը վերականգնելու զորավար գործիք։ Եվ իրոք քրիստոնեությունն այս տեսակետից միանգամայն արդարացրեց իրեն։

Հայոց կաթողիկոսության հիմնադրումից հետո կաթողիկոսները սկսեցին հետզհետե գործոն մասնակցություն ունենալ երկիրը ղեկավարելու և արտաքին հարձակումներից պաշտպանելու գործում։ Եվ այսպիսով որոշ չափով կարծես թե սահմանափակվեցին հայ

թագավորների միահեծանության իրավունքները։

Ինչպես էլ բացատրելու լինենք մեր պատմության հետ Տրդատյան ժամանակաշրջանը՝ թագավորների և կաթողիկոսների փոխհարաբերության ու իրավունքների տեսակետից՝ քաղաքական իշխանության խնդրում, մի բան ակնհայտի կերպով պարզ է՝ այն, որ կաթողիկոսները հաճախ էին միջամտում քաղաքական և երկրի ղեկավարման գործին։

Ինչպես նկատվում է մեր պատմության ընթացքից, թագավորներն էլ իրենց հերթին, հաճախ իրենց կամքից անկախ, հարկադրված են եղել քաղաքական ղեկավարման խնդիրներում հաշիվի նստել կաթողիկոսների հետ և հետևապես եթե ոչ բոլոր հարցերում, գեթ կարևոր հանգամանքներում՝ իմանալ նրանց կարծիքն ու ստանալ համաձայնությունը։

Անկասկած է, որ Տրդատից ու Լուսավորչից հետո այդպիսի իրադրություն կար արդեն և այն ստեղծվել ու կյանքի էր կոչվել Տրդատի ու Լուսավորչի գործունեությամբ։ Բնական է, որ այդ իրադրությունը՝ քաղաքական խնդիրները միասնաբար կարգավորելու գործում, իր արմատներն ունեն հայ ժողովրդի պետական և հասարակական կյանք-

ըտմ։ Որոշք էին այդ անհրաժեշտությունը թելադրող պայմանները, որ մեր կաթողիկոսներին կրոնական խնդիրներից դուրս, պատասխանատու և հաշվետու էին դարձնում նաև քաղաքական խնդիրներում։

Մեր կաթողիկոսության հասարակական դիրքը ստեղծվեց քրիստոնեության ընդունմամբ։ Հետզհետե այն զարգացավ ու ամրապնդվեց վանքերի ու եկեղեցիների կառուցմամբ, դպրոցական ցանցի ստեղծմամբ, բայց իր զագաթնակետին հասավ գրերի գյուտի ու գրականության ստեղծման և երկու կրոնական պատերազմների—Վարդանանց ու Վահանանց պատերազմների շնորհիվ։

Այլ խոսքով ասած՝ եկեղեցին իր գործունեությամբ ինքն իր համար ստեղծեց ու ամրապնդեց այդ դիրքը։ Իսկ այդ դիրքն ստեղծելուց հետո բնականաբար նա իր ուղեքրի տակ հող պիտի ունենար և իրեն բավական ամուր ու ուժեղ պիտի զգար էլ ավելի միջամտելու քաղաքական գործերին ու մասնակից լինելու պետության ղեկավարմանը։

Ինչպես հայտնի է, Հայ Եկեղեցու ականաւոր ներկայացուցիչները Ծ դարից սկսած սերտ կապված էին քրիստոնեական Բյուզանդիայի հետ։ Բյուզանդիայում էին ստացել իրենց կրթությունը մեր գրականության վեստրանները, որոնք բոլորն էլ նշանավոր հոգևորականներ էին և ղեկավար դեր էին խաղում։ Այս պատճառով էլ բնական է, որ Բյուզանդական ազդեցությունը Հայոց կաթողիկոսության վրա գերակշռող հանդիսաւոր։ Միաժամանակ հայտնի է, որ պարսիկները և հույները երկար տարիներ համառ պայքար էին մղում միմյանց դեմ Հայաստանին տիրելու համար։

Արդ հավանական է, որ մեր կաթողիկոսները աշխատեին պետական կառքը միշտ ուղղել դեպի քրիստոնեական Բյուզանդիայի կողմը, իսկ թագավորները հավանաբար էին երբեմն մեկ և երբեմն մյուս կողմն ուղղելու՝ ելնելով ասեղծված կացությունից։ Այսպիսով վերնախավում ըստ ստեղծվում էր քաղաքական հակամարտություն։ Այս հողի վրա առաջացող տարաձայնությունների հետևանքով թագավորների ու կաթողիկոսների համագործակցությունը հաճախ սխալվում էր սուր պայքարի։ Օրինակ Արշակ, Տիրան, և Պապ թագավորների կողմից գործադրված խիստ միջոցառումները կաթողիկոսների նկատմամբ, նոցա սկսած հալածանքները աներկբայորեն ցույց են

տալիս, որ թագավորները հանձնիս կաթողիկոսների տեսել են իրենց քաղաքական հակառակորդներին և նրանց հետ ընդհանուր լեզու չգտնելու դեպքում աշխատել են նրանց ասպարեզից վերացնել։ Այս պարագան արդեն ինքնին շարժառիթ է հանդիսացել քաղաքական հողի վրա նույնիսկ սպանությունների դիմելու։

Որ պարսից պետությունը Հայաստանում բազմաթիվ քաղաքական գործակալներ ուներ, դա պատմական իրողություն է։ Իսկ որ այդ գործակալների միջոցով նա ազդելով կամ բռնանալով հայոց թագավորների վրա կարող էր հունական քաղաքականության կողմնակիցներին և քրիստոնեություն ակաւնաւոր դեմքերին չեզոքացնել ու վերացնել ասպարեզից, այդ ոչ միայն իրողություն, այլ և մեր պատմությանը զուգակցող մշտական երևույթ էր այնքան ժամանակ, քանի դեռ երկու կողմերի միջև պայքարը Հայաստանի նկատմամբ գերիշխանության հասնելու համար։ շարունակվում էր։

Կաթողիկոսների ունեցած քաղաքական դերի, ինչպես և քաղաքական իշխանության բնագավառում նրանց գերակշիռ դիրքի ու ազդեցության մասին մեր պատմության մեջ բազմաթիվ փաստեր ու հիշատակություններ կան։ Եվ այդ տվյալների համաձայն պարզվում է, որ Տրդատ Մեծից հետո երկրի գերագույն ղեկավարությունը կենտրոնացած է եղել թագավորի, կաթողիկոսի և բանակի արպարապետի ու հազարապետի ձեռքերում, ընդ որում որոշ չափով հաշվի են առնվել նաև ազդեցիկ նախարարները։

Ինչպես Արշակունյաց թագավորության ժամանակ, այնպես և նրա անկումից հետո, այս իրողությունը գերիշխող է եղել և հաւնաւել է ընդհանուրի կողմից։ Ծիշտ է, թագավորները պահպանել են իրենց միանշանաւ ու բացարձակ իշխանության իրավունքը, բայց դրա կողքին տեղ է գտել նաև համագործակցության սխաւեմը՝ թագավորի, կաթողիկոսի, սպարապետի ու հազարապետի և ազդեցիկ նախարարական տների։ Այդ համագործակցությունը, որ կրել է մերթ պաշտոնական և մերթ անպաշտոն բնույթ, իր արտահայտությունն է գտել հայ ժողովրդի կյանքում ու նրա պատմության մեջ։

Այս առնչությամբ չպետք է մոռանալ, որ Հայ Եկեղեցին խոշոր կալվածատիրական միավոր էր հանդիսանում ու բազմաթիվ թելերով կապված էր ինչպես անվանի նախարարական և իշխանական տների, այնպես էլ բուն, ռամիկ ժողովրդի հետ։ Կալվածատիրական այս բնույթը ինքնին հեղինակություն

և դիրք էր ստեղծում կաթողիկոսի կողմից գլխավորվող եկեղեցու համար:

Քաղաքական իշխանությանը գործոն մասնակցություն ունենալու պահանջը ինքստինքյան բխում էր նաև մեր երկրի քաղաքական իրադրությունից և այն քաղաքականությունից ու առաջադրանքներից, որ թելադրում էին մեր երկրի նկատմամբ գերիշխանություն ունեցող պետությունները: Այն պայմանավորված էր նաև մեր ժողովրդի՝ իր անկախության ու ինքնուրույնության համար մղվող հերոսական պայքարով: Բնական է, որ եկեղեցին չէր կարող անմասն մնալ այդ պայքարից. ոչ միայն չէր կարող, այլ և իր ունեցած հասարակական դիրքը թելադրում էր նրան մասնակցել հայ ժողովրդի ինքնուրույնության համար մղվող պայքարին և Հայ եկեղեցին իրեն վերապահված այդ պատվավոր դերը բարեխղճությամբ կատարեց, միշտ հավատարիմ ու անձնվեր մնալով այն հերոսական պայքարին, որ մոռում էր և մղեց հայ ժողովուրդը իր անկախության ու Հայրենիքի ամբողջականության պահպանման համար:

Որ հերավի Հայոց կաթողիկոսությունը գործոն մասնակցություն ուներ երկրի զեկավարման գործում, ապացուցվում է նախ և առաջ նրանով, որ մեր երկրի նկատմամբ գերիշխանություն ունեցող օտար պետությունները հաճախ դիմում էին կաթողիկոսներին, սրան կամ նրան Հայաստանի թագավոր կամ կառավարիչ ու մարզպան նշանակելու խնդիրներով ու ստանում նրա համաձայնությունը: Կաթողիկոսները իրավունք ունեին այս կամ այն թագավորի ու բարձրաստիճան պաշտոնյայի հեռացման խնդիրը դրնել տիրող պետությունների առաջ: Մեր պատմության ընթացքից երևում է, որ, օրինակ Սասանյան դինաստիայի ժամանակ օտար տիրողները ըստ ամենալին հաշվի էին առնում կաթողիկոսների և ազդեցիկ նախարարների կարծիքները: Այստեղ, ի հարկե, կարևորն այն չէ, թե ինչից ելնելով նոքա հաշվի էին առնում այդ կարծիքները, որովհետև մեր կողմից ըննարկվող հարցի էությունը դրանից չի փոխվում:

Անշուշտ կարծիքները հաշվի առնելու քաղաքական նպատակներ էր հետապնդում. այն է հեշտացնել ու հարատև դարձնել իրենց տիրապետությունը, երկրում իրենց կողմնակիցների թիվը շատացնելու և այն դժգոհությունները կանխելու միջոցով, որոնք կարող էին խռովությունների ու ապստամբությունների հանգեցնել: Հետևապես հասկանալի է, որ նման քաղաքականությունը որոշ շափով թուլացնում էր ժողովրդի

ընդիմության ոգին և զգալիորեն նպաստում երկիրը հնազանդության վիճակում պահելու գործին: Մյուս կողմից ուժեղացնելով կաթողիկոսների քաղաքական ազդեցությունը, օտար տիրողները ձգտում էին իրենց հեղինակությունը բարձրացնել ժողովրդի աչքում:

Երկիրը համատեղ ղեկավարելու փառուն օրինակ է հանդիսանում Տրդատի և Լուսավորչի գործունեությունը, այնուհետև Վռամշապուհի, Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը: Վերջին երեքն էլ մտահոգված էին պետական առաջնակարգ նշանակություն ունեցող խնդրով՝ զրբրի գյուղատվ: Նրանք ոչ մի ճիգ ու ջանք չէին խնայում պետական այդ մեծ գործը գլուխ բերելու համար: Նոքա մարզաբնացան հառաչիկա հիսնամյակում տեղի ունենալիք անցքերի նկատմամբ կանխադուշակելով այն բռնացման քաղաքականությունը, որ պարսիկները պիտի վարեին մեկ հիսնամյակ հետո: Նրանք կանխազգում էին կրոնական պատերազմների և դրանց հետ կապված կես դար տևող արհավիրաց անցքերի մոտալուտ լինելը: Մտահոգված գալիքի խնդիրներով՝ նրանք շտապում էին օր առաջ կոփել փոփոխության ու ընդդիմության զննքը. այսինքն ստեղծել դիր ու գրականություն և աճող սերունդի ձեռքը տալով այս նոր զննքը, ներշնչել նրան հայրենասիրության փոխակար ոգին:

Մեռնում է Վռամշապուհը. նախարարները Սահակ Պարթևի հետ խորհրդակցելով որոշում են խնդրել պարսից Վռամ թագավորին, որպեսզի Վռամշապուհի որդի Արտաշեսին թագավոր նշանակի Հայաստանում: Դեսպաններ են ուղարկվում պարսից արքունիք և թագավորը հարգում է կաթողիկոսի ու նախարարների խնդիրը. սակայն Արտաշեսը իր վարքով տեղիք է տալիս նախարարների դժգոհությանը. նոքա դիմում են կաթողիկոսին և խնդրում նորա համաձայնությունը Արտաշեսին գահընկեց անելու վերաբերյալ: Հայրենասեր կաթողիկոսը ընդիմանում է, ասելով հետևյալ պատմական խոսքերը. «Քավ լիցի ինձ, իմ հիվանդոտ ոչխարը առողջ դադանի հետ փոխել, որի առողջությունն իսկ մեզ համար պատուհաս է»:

Մերժում ստանալով նախարարները սըպառնում են նաև կաթողիկոսին և Սուրմակ երեցին առած Պարսկաստան են մեկնում: Այնտեղ ամբաստանում են թե Արտաշես թագավորին ու թե կաթողիկոսին՝ Հունաստանին միանալու ծրագիր ունենալու համար՝ և այլն: Քաղաքական զրպարտանքը

կատարում է իր գործը: Արտաշեսը և կաթողիկոսը արքունիք են կանչվում: Վռամը նոցա լսել անգամ չի ուզում և պահում է Պարսկաստանում, չի ուղարկելով Հայաստան վերադառնալ: Հայաստանի կառավարիչ է նշանակվում պարսիկ մարդպան Վեհմիհր Մալուհը, Արտաշեսը գահազուրկ է արվում, Սահակ Պարթևը հեռացվում կաթողիկոսությունից և դավաճան Սուրմակը կաթողիկոս նշանակվում: Այսպիսով պարսկական դիմա-նադիտությունը ճարպկորեն կարողանում է օգտագործել ներքին տարաձայնությունները իր քաղաքական նպատակների համար և առաջ քաշել իր հյուսիսային կառավարներին:

Հայրենասեր կաթողիկոսը տեղի տալով բիրտ ուժի առաջ քաշվում է քաղաքական ասպարեզից:

Հետագայում Վռամ Մալուհի, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մարգարեական կանխագուշակությունը կատարվում է: Վրա են հասնում Վարդանանց դեպքերը: Պառսիկները կրոնափոխությամբ փորձում են հայերին հեռացնել հուլենից ու միաձուլել իրենց: Կրկին պառակտում է առաջանում վերնախավում: Հայաստանի մարտապան Վասակ Սյունին մեկուսանում է: Սակայն հայրենիքի հետ էր նորա հերոս կաթողիկոսը՝ Հովսեփը իր հոգևորական գնդով, ահա նա պատերազմի դաշտումն է: Ե՛ք մյուս է թողնամու դեմ, ե՛ք խրախուսում կռիվողներին: Նրա հետ է հայ ժողովրդի հավատարիմ զավակը՝ Ղևոնդ Երեցը:

Պարսիկները հաղթում են: ապստամբության ղեկավարները տարվում են Տիգրոն: Մի տարի բանտ նստելուց հետո կաթողիկոսն իր հոգևորական գնդով նահատակվում է, հավերժական փառքով պսակելով Հայ եկեղեցին ու կաթողիկոսությունը:

Սակայն պարսիկները չեն հրաժարվում իրենց քաղաքականությունից և սկսվում է երկրորդ կրոնական պատերազմը: Այս անգամ վերնախավում հայտնվում են Հովհան Մանդակունի և Գյուտ Վաթուհի կոստաները: Երկուսն էլ պայքարում են պարսից դեմ ղեկավարելով Հայ ժողովրդի ապստամբական շարժումները:

Հաջորդ դարերի ընթացքում էլ մենք պատմության մեջ չենք հանդիպում որևէ դեպքի կամ փաստի այն մասին, որ Հայ եկեղեցին կամ հոգևորականությունը դավաճանի, դավադրություն կազմակերպի հայ ժողովրդի, Հայրենիքի կամ նորա պետականության

հանդեպ, չնայած որոշ պետական ճնշումների, իրավունքների ու հասունների կրթաաման առկայության (Պապ թագավորի գործունեությունը): Նամանավանդ երբ եկեղեցին հնարավորություն ուներ ըմբոստանալով ժողովրդի նկատմամբ ունեցած իր ազդեցության, տնտեսական ուժի և կալվածատիրական դիրքի շնորհիվ:

Այս հանգամանքն ինքնին շատ բան է պարզում: Այն ժամանակ, երբ մենք ակա-նատես ենք որոշ նախարարական տների դավաճանությանը և իրենց վստահված դուրազներով թշնամու կողմն անցնելու փառ-տերին, այլ բան ենք տեսնում հոգևորականության շարքերում: այսպիսի պահերին Հայ եկեղեցին ու կաթողիկոսությունը անբաժան են եղել ժողովրդից և իրենց անձնազոհությամբ խրախուսել ու քաջալերել են Հայրենիքի անկախության համար պայքարողներին: Դրան օրինակ կարող են ծառայել Վարդանն ու Վասակ Սյունին, այս երկուսի փոխարարներությունը ու Հայրենիքի հանդեպ ունեցած դիրքը և Հովսեփի կաթողիկոսն ու Ղևոնդ Երեցը իրենց հետևորդներով: դրան օրինակ կարող են ծառայել Արտաշեսին գահընկեց անող հայ նախարարները և ապա Սահակ Պարթևը, ինչպես նաև Մանդակունին, Գյուտը և սոցա հաջորդները:

Հայ եկեղեցին ու կաթողիկոսությունը երկրի գերագույն ղեկավարությունը թագավորների հետ բաժանել ու համերաշխ մտնել են նաև արարների, թաթարների, սելջուկների տիրապետության ժամանակ:

Ահա նրանք Անիում Բագրատունիների հետ, ահա Վասպուրականում Արծրունիների հետ, ահա Սյունիքում Սյունյաց իշխանների հետ, ահա և Կիլիկիայում Ռուբինյանցի հետ:

Ե՛վ բոլոր ժամանակներում ե՛վ բոլոր դեպքերում նրանք որպես անդամաճան հայրենասերներ հրապարակ են եկել հանուն հայ ժողովրդի, հանուն Հայ Հայրենիքի:

Հետագայում, Ռուբինյանց իշխանության վերացումից հետո, երբ կաթողիկոսությունը բնականաբար շատ քիչ անելիքներ ուներ Կիլիկիայում, իր Աթոռը 1441 թվին փոխադրում է Ս. Էջմիածին, Մայր Հայրենիք: նվազում է նաև նրա քաղաքական դերը: Նրան վերապահվում է հայ ժողովրդի միայն ընդհանրական ներկայացուցչության իրավունքը:

Բնական և հասկանալի է, որ կաթողիկոսության քաղաքական ղեկավարության դեր

ստանձնելը պայմանավորված էր հայ ժողովրդի քաղաքական անկախությամբ և պետականության գոյությամբ ու վերջիններիս վերացման հետ պիտի վերանար նաև կաթողիկոսության քաղաքական դերը, որպես անհամատեղելի օտար նվաճողների պետականության հետ:

Քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո կաթողիկոսությունը և այնուհետև կյանքի կոչված պատրիարքությունները (Կողոստ և Նրուսադեմի) օգտվում էին հայ ժողովրդի ներկայացուցչության իրավունքներով: Հայաստանին տիրողները՝ պարսիկները, օսմանցիք, հետագայում նաև ռուսները լիակատար կերպով ճանաչեցին այդ իրավունքը և հաճախ կաթողիկոսության այդ իրավասությունից ելնելով քաղաքական խնդիրների շուրջը բանակցությունների մեջ էին մտնում կաթողիկոսների հետ:

Տիրողները հետապնդում էին իրենց նվաճողական շահերը, իսկ կաթողիկոսները հետամուտ էին հայ ժողովրդի վիճակը բարձրելու, նրա համար արտոնություններ ձեռք բերելու ու նրա պատմական իրավունքները վերականգնելու:

Չի կարելի ասել, որ մեր որոշ կաթողիկոսներ քիչ գործ են կատարել այս ուղղությամբ: Հնդհակառակը կարելի է պնդել ու հաստատել, որ այս կապակցությամբ նոքա արել են ու նրա ամենը, ինչ որ կարելի ու հնարավոր էր:

Մեր կաթողիկոսների գործունեության այս ժամանակաշրջանը, 1441 թվից մինչև 1890-ական թվականները, կարելի է բնորոշել որպես հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության պայքարի ժամանակաշրջան, որ մղել են մեր եկեղեցին, կաթողիկոսությունը ու պատրիարքությունները վերականգնելու ու ճանաչել տալու համար հայ ժողովրդի ինչպես քաղաքական, նույնպես և տնտեսական իրավունքները տիրող պետություններին՝ պարսիկներին, օսմանցիներին, ռուսներին:

Ավելորդ է խոսել այն մասին, որ պատմական դեպքերի բերումով, քաղաքական իշխանությունը կորցնելուց հետո, հայ ժողովրդին իր քաղաքական տենչերի իրագործումը պիտի կապեր եկեղեցու հետ, որն այսպես թե այնպես պահպանել էր իր կրոնական ու ազգային ոգին, իր կազմակերպությունը և թեև որոշ չափով նսեմացած՝ նաև իր դիրքն ու հեղինակությունը օտար

տիրապետողների մոտ և ի վիճակի էր պաշտպանելու ու կյանքի կոչելու հայ ժողովրդի տնտեսական և քաղաքացիական իրավունքները, միակ միջնորդը հանդիսանալով ժողովրդի և օտար տիրողների միջև: Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և պատրիարքությունները պատվով կատարեցին իրենց վիճակված պատմական այդ դժվարին առաքելությունը՝ հանդիսանալով հայ ժողովրդի քաղաքական իղձերի պաշտպաններ, նրանք հաճախակի խրախուսում ու քաջալերում էին հայ ժողովրդի անհավասար պայքարը հզոր տիրողների դեմ:

Որ հիրավի Հայոց կաթողիկոսությունը և նրա ներկայացուցիչները փայլուն կերպով իրագործեցին և հրահրեցին հայ ժողովրդի ազատագրության համար մղվող պայքարը, գեթ մահմեդական դաժան տիրապետությունից ազատելու խնդրում, հանրածանոթ իրողություն է և կարիք չկա փաստեր հիշատակելու:

Ինչով էր պայմանավորված Հայ եկեղեցու, նորա կաթողիկոսության կամ նորա այլ կազմակերպությունների այսպիսի հեղինակությունն ու ուժը:

1. Նախ և առաջ նրանով, որ Հայ եկեղեցին իր սկզբնավորության առաջին իսկ շրջանից հոգևոր թելերով կապված էր ժողովրդական լայն մասսաների հետ:

2. Հայ եկեղեցու ժողովրդական բնույթը, ժողովրդական իրավունքների ճանաչումը, ընդ որում՝ այդ իրավունքները ղեկավարող սկզբունքներ էին եկեղեցական գործերում. — ընտրական սիստեմ, ազգային-եկեղեցական ժողովներ, կաթողիկոսական ընտրություններ, աշխարհականների ու հոգևորականների խառն ղեկավար մարմիններ, հոգաբարձություն, եկեղեցական, թեմական խորհուրդներ և այլն:

3. Ավանդական-տրադիցիոն այն ժառանգական սովորույթը, որ Լուսավորչից և Տրդատից անցել էր նրանց հաջորդներին և վերջիններիս միջոցով պահպանվել: Տրդատի և Լուսավորչի միասնական գործունեությունը և ղեկավարությունը որպես օրինակ ժառանգել էին նաև հաջորդները և այսպես ավանդաբար ճանաչվել ու շարունակվել էր:

4. Այն անձնազուգործունեությունը՝ հանուն ժողովրդի և Հայրենիքի, որ ցուցաբերել էր հայ հոգևորականությունը երկրի ճգնաժամային դեպքերում. — Վարդանանց և Վա-

հանանց պատերազմները ու հետագա դեպքերը:

5. Գրեթե գյուտը և հետ այնու գրականության ստեղծումը հոգևորականության ջանքերով՝ կապված քրիստոնեության պահանջների հետ և այս առնչությամբ վանքերի, անապատների հետագա զործունեությունը՝ որպես լուսավորության ու կուլտուրայի օջախներ:


6. Մեր եկեղեցու խոշոր կալվածատիրական բնույթը:

7. Ուտար տիրապետողների՝ արաբների, թաթարների, պարսիկների, օսմանցիների, նաև ռուսների մոտ հոգևորականության ունեցած դերն ու հեղինակությունը,

8. Կաթողիկոսության, պատրիարքությունների, եպիսկոպոսությունների և ընդհանրապես եկեղեցու պայքարը հանուն հայ ժողովրդի իրավունքների ու շահերի, հանուն նորա ազատագրման:

9. Հայ եկեղեցու ազգային-ժողովրդական բնույթը՝ տոներ, ավանդությունների պահպանում, աղոթքներում և մաղթանքներում հայ ժողովրդի ազատագրական տենչերի արտահայտություններ և այլն:

10. Եկեղեցական դրականության, մատենագրության և կրոնական-եկեղեցական մամուլի ուժը:



Հռոմոսի վանքի (Ղոշավանք) երեք տապանատները
հարավ-արևմտյան կողմից (ԺԳ դար)